Տ. ՈՍԿԱՆ ՔՀՆ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԸ ԵՒ ԿԵՆԱՑ ԽՕՍՔԸ

«Եկեղեցին է եղել, որտեղից սիրոյ հրեշտակը դուրս գալով՝
լուսափեղուր թեւերը տարածել է տգիտութեան ու ներքին
անընդհատ գժտութեան խաւարի մէջ խարխափող երկրի վերայ»[1]:
Յովհ. Յովհաննիսեան

ԺԹ. դարի վերջին եւ Ի. դարի սկզբին, երբ հայ ժողովուրդը կենաց եւ մահու պայքար էր մղում սեփական դիմագիծն ու արժէքամակարգը պահելու, պաշտպանելու համար, հայոց հոգեւոր մայրաքաղաք Վաղարշապատում ծնուեց, ապրեց եւ ստեղծագործեց հայ անուանի բանաստեղծ Յովհաննէս Յովհաննիսեանը (1864-1929 թթ.)՝ կեանքի վաթսունհինգ տարիներից քսանը նուիրաբերելով Հոգեւոր ճեմարանին: Ինչպէս Ճեմարանի տեսուչ Մինաս Բէրբէրեանն է ասել. «Նա եկաւ սէր աւետելու եւ իր ու ազգի սուգը ողբալու, կոշտացած սրտեր փափկեցնելու եւ գեղեցիկ գաղափարով ոգեւորելու»[2]: Իրաւամբ, նրա ստեղծագործութիւններն ընթերցելիս բացահայտում ենք բանաստեղծի էութիւնը, որի մէջ միաւորում է Հայրենիքի, Աստուծոյ եւ մարդու հանդէպ ունեցած անսահման սէրը: Արդ, սիրոյ այս պտուղները Յովհ. Յովհաննիսեանը ժառանգել է իր ծնողներից եւ ընտանիքի անդամներից: Նրա սիրելի ընկեր եւ բարեկամ Գարեգին Լեւոնեանն իր «Յուշեր»-ում այսպէս է բնութագրում Յովհ. Յովհաննիսեանի ընտանիքը. «Գիւղի գլխաւոր փողոցում, բուլվարի դիմաց, դէպի աջ թեքուող մի նեղ փողոցի վրայ էր գտնւում բանաստեղծի հայրական տունը... Առաջին անգամը լինելով, ծանօթացայ Յովհաննիսեանի մօրը, ամուսնուն, քոյրերին եւ զաւակներին: Ես ինձ զգացի մի շէն օջախում, նահապե-

1 **Յովհաննէս Յովհաննիսեան,** Ճառ Ճեմարանի հիմնադրութեան 15-ամեակի առթիւ. «Արարատ», 1888, Ժ., էջ 629. «Էջմիածին», 1975, Գ., էջ 16:
2 **Մինաս Բէրբէրեան,** Սգաւոր խղճալիսր. «Արարատ», 1908, Դ., էջ 380:

տական պարզութեան եւ անկեղծ վերաբերմունքի հետ տեսայ նաեւ կիրթ եւ բարեկարգ կենցաղ»[3]:

Հակառակ ծանր եւ դաժան կեանքին, ժամանակի կենցաղային, ընկերային եւ քաղաքական մարտահրաւէրներին՝ բանաստեղծ եւ Ճեմարանի երախտաւոր ուսուցիչ Յովի. Յովհաննիսեանը չհուսալքուեց, այլ, ընդհակառակը, սիրով եւ ապագայի նկատմամբ մեծ յոյսով կարողացաւ ստեղծագործել. աղքատի հետ ողբալով, լքեալի հետ ընկերանալով, դժբախտի հետ տխրելով, սովեալի հետ հեկեկալով, աշխատաւորի հետ տքնելով, կորուսեալին մխիթարելով, թերահաւատներին յուսադրելով՝ կտակեց թուով սակաւ, բայց ինքնատիպ եւ արժէքաւոր ժառանգութիւն:

Լինելով ուսեալ՝ նա երբէք չիպարտացաւ եւ չտարբերուեց հասարակութեան որեւէ անդամից՝ աղքատ թէ հարուստ, ռամիկ թէ քաղաքացի, տգէտ թէ իմաստուն, որովհետեւ քաջ գիտակցում էր Աստուծոյ մեծութիւնը եւ մարդկանց հաւասարութիւնը: Այս ամէնի վառ ապացոյցը նրա խորիմաստ ստեղծագործութիւններն են, որոնք բանաստեղծի հոգու հայելին են. միջոց, որով մարդը կարողանում է ոչ միայն արտայայտել իր յոյզերը, ցանկութիւնները, զգացմունքները, դժգոհութիւնը, այլ նաեւ ապրել դրանցով եւ ձգտել յաւիտենականութեան: Այսպիսին էր Յովհաննէս Յովհաննիսեանը: Այս տարի լրանում է մեծանուն բանաստեղծի հարիւր հիսուն ամեակը:

Միտքուելով յովհաննիսեանական լայնածաւալ, լուսաւոր, կանաչազարդ ստեղծագործական օվկիանում՝ բացայայտում ենք հոգեւոր բանաստեղծին, որն ունի կրօնական ուղղաղաւան հայեացքներ եւ ընկալումներ: Անշուշտ, Յովի. Յովհաննիսյանը ծանօթ էր նաեւ Աստուածաշնչին եւ, բնականաբար, վայելում էր Աստուծոյ անսահման սէրը: Աստուածապարգեւ այդ շնորհի առաջնորդութեամբ՝ ընկերոջ եւ կարիքաւորի նկատմամբ սէրն արտահայտել է այսպէս.

Երանի նորան որ շնորհք ունի
Սիրել անձնուէր եւ անկեղծ սրտով,
Սրբել քրտինքը վաստակաւորի
Եւ տառապեալին խնամել փութով.
Եւ երկրպագու Փրկչի սուրբ խօսքին
Անտրտունջ բաշխէ իր ձեռի լուման,
Եւ կարեկցաբար արհամարհուածին
Բաց անէ դուռը մխիթարութեան[4]...

Այս տողերը վկայում են, որ բանաստեղծը պատրաստ է հաւատակիցների համար զոհաբերուել՝ անսալով Տիրոջ պատուիրանին. «Սիրեցես զընկերս քո իբրեւ զանձն քո» (Մատթ. ԻԲ. 39): Տեսնելով թշուառին ընկած, ինչպէս մի «բարի սամարացի» (Ղուկ. Ժ. 29-37), բանաստեղծը ձեռքը մեկնեց եւ ասաց.

Ահա քեզ ձեռս, ընկե՛ր թանկագին,
Սեղմի՛ր դու նորան անվախ, անկասկած -

3 **Գարեգին Լեւոնեան,** Յուշեր, Երեւան, 1959, էջ 47:
4 **Յովի. Յովհաննիսեան,** Երկեր, Երեւան, 1959, էջ 39:

Բարեկամ է նա լքեալ թշուառին,
Փորձութեան բովում կոշտերով ծածկուած[5]:

Գարեգին Յովսէփեանը «Յովհաննէս Յովհաննիսեան» մենագրութեան մէջ, վերոնշեալ բանաստեղծութեան միջոցով բնութագրում է հեղինակին. «Բանաստեղծն, ըստ բովանդակութեան, ներկայացրել է իր հոգու եւ սրտի դիմանկարը, իր խորապէս մարդկային զգացմունքները»[6]:

Աստուածմերժութեան ծանր տարիներին Ճեմարանը օգնում է Յովհաննիսեանին սնուել Եկեղեցու պատգամներով եւ Տիրաւանդ խօսքով, հաստատուել ճշմարիտ հաւատի մէջ՝ մերժելով կռապաշտութիւնը.

Բայց ո՛չ, չըկամիմ գլուխս խոնարհել
Արիւնով կանգնած մեծափայլ կուռքին,
Եւ ոչ կարող է իմ սիրտը գրաւել
Շլացնող փառքի փշահիւս դափնին[7]:

1899 թ. Ճեմարանի 25-ամեայ յոբելեանին, դասախօս եւ քերթող (այսպէս էր ինքն իրեն կոչում) Յովհ. Յովհաննիսեանը հորդորում է հայորդիներին, որ ուսանել եւ ուսանում էին այդ կրթօջախում, իրենց սրտում անշէջ պահել հոգեւոր այդ նշանաւոր հաստատութեան պայծառ եւ անմար շողը: Իր անսահման հաւատի եւ նուիրումի համար բանաստեղծը երախտագիտութիւն է արտայայտում Ճեմարանին ձոնած բանաստեղծութեամբ.

Ուր որ երթաս, ինչ-որ լինիս կեանքի մէջ,
Սրտումդ անջինջ դու միշտ պահիր գէթ մի բան,
Թէ ցուրտ գիշեր ջերմացնող շող անշէջ,
Վահան հոգոյդ խրախոյս տուող հենարան՝
Մի մայր ունիս, նորան հիշիր սիրատենչ
Եւ միշտ կրկնիր՝ «Կեցցէ՛ հաւերժ Ճեմարան»[8]:

Եսայիի մարգարէութեան ԾԳ. գլխի հետեւողութեամբ եւ մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի փրկագործական տնօրինութեան ընկալմամբ՝ «սգաւոր իդէալիստը» (այսպէս էր բնութագրում Յովհաննիսեանին Ճեմարանի տեսուչ Մինաս Բէրբէրեանը) երգում է Աստուածորդու ծնունդը, հրաշքներն ու չարչարանքները, խաչելութիւնը եւ հրաշափառ Յարութիւնը.

...Աներկբայ մտքով, հաւատող հոգով
Քարոզում էր իւր խաչի քաղցրութիւն,
Ինչպէս խարազան երկաթի խօսքով
Նա հալածում էր շահ ու բռնութիւն[9]:

Քրիստոս պատուիրեց՝ վերցնել խաչը եւ գնալ Իր ետեւից (հմմտ. Մատթ. Ժ. 38): Այս պատգամին անսալով՝ բանաստեղծը պատրաստ է վերցնել իրեն վստահուած խա-

5 Անդ, էջ 64:
6 **Գարեգին Յովսէփեան,** Յովհաննէս Յովհաննիսեան, Երեւան, 1957, էջ 159:
7 **Յովհ. Յովհաննիսեան,** Երկեր, էջ 59:
8 **Խաչատուր Կանայեան,** Իմ յուշերը Գեւորգյան ճեմարանից. «Էջմիածին», Զ., 1964, էջ 26:
9 **Յովհ. Յովհաննիսեան,** Երկեր, էջ 68:

չը, կրել ուսերին եւ յանուն փրկութեան՝ անհողդողդ հաւատքով քայլել կեանքի փոթորկալից ծովով՝ օրինակ ունենալով Քրիստոսին.

Եւ նա մեծացաւ, եւ կեանքը մտաւ,
Եւ հաւատարիմ մնաց իւր խաչին.
Հանդուգն լուղորդ՝ ալեաց մէջ ընկաւ,
Մրցում էր, դիմում փրկութեան ափին[10]:

Յովհաննու Աւետարանում կարդում ենք, որ Աստուած մարդկութեան նկատմամբ սէրն արտայայտեց Իր Միածին Որդուն՝ Յիսուս Քրիստոսին զոհաբերելով մեր փրկութեան համար (Յովհ. Գ. 16): Յովհ. Յովհաննիսեանը, աւետարանական այս տողերին հաղորդելով գեղարուեստականութիւն, բանաստեղծական առումով այսպէս է ներկայացնում.

Եւ հաւատարիմ իւր կոչման մեռաւ՝
Սուրբ ճշմարտութեան անբիծ նահատակ,
Իսկ սիրոյ նշանն անմահ դրոշմեցաւ
Շատերի սրտում մէկի փոխանակ[11]...

Բարութիւնը եւ այդ առաքինութիւնից բխող բարեգործութիւնը Յովհ. Յովհաննիսեանի համար աստուածատուր շնորհներից ամենակարեւորն է: Որպէս բնաբան օգտագործելով Եսայիի մարգարէութեան Ա. գլխի 17-րդ համարը՝ «Ուսարուք զբարիս գործել. խնդրեցէք զիրաւունս, փրկեցէք զգրկեալն, դատ արարէք որբոյն, եւ տուք իրաւունս այրւոյն», բանաստեղծը այլաբանօրէն շաղախում է իր բանաստեղծութեան հեփեւեալ տողերը.

Թող հնչեն նորից հին երգը անմահ
Եւ վառեն սիրով սրտերը մարդկան,
Թող նոքա նորից օրհներգեն անահ
Գործերը բարոյ եւ կարեկցութեան[12]:

Կեղծաւորութիւնը եւ փարիսեցիութիւնը բանաստեղծի թշնամին են: Այս է պատճառը, որ նա իր ստեղծագործութիւնը շարադրելիս, որպէս բնաբան, օգտագործում է Ղուկասի Աւետարանի ԺԱ. գլխի 44 համարը՝ «Վա՛յ ձեզ, զի էք դուք իբրեւ զգերեզմանս անյայտս, եւ մարդիկ գնան ի վերայ եւ ոչ գիտեն»: Ինչո՞ւ աստուածաշնչեան այս տողերը. հեղինակը քաջատեղեակ է կեղծաւորների եւ փարիսեցիների գործունէութեանը, որոնք սովոր են իրենց կատարած խաւար գործերը ծածկել ճշմարտութեան սպիտակ սաւանով.

Եւ պարզ հաւատով առաջ ենք գնում
Դրախտ կարծելով խաւար ապագան
Եւ առաջնորդ ենք մենք մեզ ճանաչում
Ճշմարտութիւնը, սէրը մեր նշան[13]:

---

10 Անդ:
11 Անդ:
12 Անդ, էջ 69:
13 **Յովհ. Յովհաննիսեան,** Երկերի ժողովածու, հտ. Ա., Երեւան, 1964, էջ 105:

Այս բանաստեղծութիւնը կոչ է համայն մարդկութեանը՝ զգուշանալու փարիսեցիներից եւ կեղծաւորներից, որովհետեւ «մեղրածոր գինու փոխարէն թոյն են մատուցում»՝ մարդուն դարձնելով եսասէր եւ սեփական անձի գերի: Այսպիսի մարդիկ՝ «իսաւար ինչպէս գերեզման կա՛մ շանթում են խարդախ օձի պէս, կա՛մ զգում են սիրող մօր նման», - գրել է բանաստեղծը[14]:

«Հապիկ» վերնագրով բնաստեղծութիւնը կարծէս մի մարգարեութիւն լինի այն մասին, որ կեանքը բացի մարմնականից, նաեւ հոգեւոր իրողութիւն է: Այս մասին Աստուծոյ Որդին ասում է. «Եթէ ոչ հաստ ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի, ինքն միայն կայ. ապա եթէ մեռանիցի, բազում արդիւնս առնէ» (Յովհ. ԺԲ. 24): Մարդն իբրեւ ցորենի հատիկ պիտի մեռնի, որ բազում արդիւնք տայ, այսինքն՝ յարութիւն առնի: Բանաստեղծն այդ հատիկի մէջ դնում է իր տառապեալ եւ փորձութիւններով լի կեանքը, մարդկային թուլութիւններն ու մեղքերը, որպէսզի հողի մէջ դրանց հետ յաւիտեան մեռնի, իսկ Քրիստոսի խօսքով՝ ծլարձակի ու կանաչի.

Թաղե՛մ քեզ, հատի՛կ, եւ դարդս քեզ հետ.
Թէ Աստուած ուզեց, դու կանաչեցիր՝
Թող դարդս մեռնի գետնի տակ անհետ,
Դու ինձ մխիթար նորից տուն դարձի՛ր[15]:

Աստուծոյ դրախտային պարտէզի յաւիտենական տունկ լինելու համար Յովհ. Յովհաննիսեանը խնդրում է Տիրամօր բարեխօսութիւնը, փառաբանում Աստծուն, իսկ խունկ ծխելով՝ փնտրում Երկնաւորի ողորմութիւնն ու գթութիւնը.

Եւ ջերմ աղօթքով Տիրամօր առջեւ
Ես մոմ կը վառեմ, ես խունկ կը ծխեմ,
Որ քեզ պարգեւի մի առատ անձրեւ,
Որ միշտ քեզ սիրով նայեմ խնդադէմ[16]:

Արսէն Տէրտէրեանը «Հապիկ» բանաստեղծութիւնը մեկնաբանում է կրօնաբարոյական տեսանկիւնից. «Գիւղացու աշխատանքի թագուհին հողն է, հողն է, որ պիտի ծնի, բազմացնի նրա կա՛մ հոգսերն ու դարդերը, կա՛մ երջանկութիւնն ու բարեկեցութիւնը»[17]: Բայց սրա հետ մեկտեղ «Աստուած էլ պիտի բարեհաճ եւ սիրալիր վերաբերուի դէպի գիւղացին, եթէ ոչ՝ նրա արտը չի կարող կերակրել նրան. իսկ այս կախուած է վերջինիս վարած կեանքից»[18]: Ըստ Արսէն Տէրտէրեանի՝ այստեղ Յովհ. Յովհաննիսեանը գնահատում է գիւղացու՝ առ Աստուած տածած երկիւղածութիւնը: Գեղջուկը գիտակցում է իր մեղքերը, որոնց պատճառով արտը կարող է չկանաչել եւ չպտղաբերել: Այնուամենայնիւ, գիւղացին չի դադարում աշխատելուց եւ պատրաստ է ճակատի քրտինքով ոռոգելու անջրդի իր հողը[19]:

---

14 Անդ:
15 **Յովհ. Յովհաննիսեան,** Երկեր, էջ 48:
16 Անդ:
17 **Արսէն Տէրտէրեան,** Յովհաննէս Յովհաննիսեան, Վաղարշապատ, 1914, էջ 53:
18 Անդ:
19 Տե՛ս **Ա. Տէրտէրեան,** էջ 53-54:

Յովհաննիսեանի հոգեւոր աշխարհում առանձնայատուկ տեղ է գրաւում Ս. Աստուածածինը: Կտրուելով աշխարհի թոհուբոհից՝ բանաստեղծը, կանգնած Տիրամօր պատկերի առաջ, խնդրում է նրա բարեխօսութիւնը, բայց միաժամանակ Աստուածածնի աչքերում նկատում է սիրատոչոր մօր թախիծը, արտասուքն ու տխրութիւնը, որովհետեւ իր Միածին Որդու ընտրեալ ժողովուրդը հալածանքի, կենաց-մահու պայքարի մէջ է: Այսպէս է գրում աղմուկ-աղաղակներից թաքնուած բանաստեղծը.

Մաքուր բերկրութեամբ լի է իմ հոգին,
Ծունկ եմ խոնարհում ահա քո առաջ,
Սուրբ գեղեցկութեան տիպար երկնային,
Կենդանի սիրոյ մայր լալահառաչ[20]...

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայրապետը մեռելների յարութեան խորհուրդը նոյնացնում է գարնան, վերազարթօնքի հետ. տարուայ մի եղանակ, երբ բնութիւնը արթնանում է ձմեռային խորը քնից՝ զարդարուելով կանաչ տերեւներով, գոյնզգոյն ծաղիկներով: Մարդն էլ՝ իբրեւ տերեւաթափ եղած մի ծառ, գարնանը կանաչելու եւ փթթելու, այսինքն՝ յարութիւն առնելու շնորհ ունի: Գարունը հանգստութիւն է բերում, իսկ հոգնատանջ բանաստեղծը կարօտ է այդ կանաչազարդմանը եւ խաղաղութեանը.

Ծլի՛ր, կանաչի՛ր, ոսկէ սաւանով
Ծածկի՛ր իմ արտը ողջ ալէծածան,
Նոր այն ժամանակ անուշ շրշիւնով
Տո՛ւր ջարդուած սրտիս մի քուն հանգստեան[21]:

Բանաստեղծը քաջ գիտակցում է աշխարհիկացման վտանգը եւ կոչ անում հայութեանը հեռու մնալ փառքից, իշխանատենչութիւնից, ցուցամոլութիւնից եւ այն ամէնից, որ տանում է դէպի հպարտութիւն, գոռոզութիւն, որովհետեւ Աստուծոյ խօսքը վերաբերում է ոչ թէ անհատին, այլ ողջ մարդկութեանը. «Հող էիր, ով մարդ, հող դառնաս դարձեալ» (հմմտ. Ծնող. Գ. 19), - ասում է բանաստեղծը: Այսպիսով, հեղինակը պատգամում է մարդկութեանը չշեղուել ճշմարտութեան սուրբ խօսքից, իսկ իր համար խնդրում՝ «մի թիզ հող վերջին հանգստեան»[22]:

«Փրկութեան Խաչը» բանաստեղծութեան մէջ կեանքը նմանեցնելով նաւարկութեան՝ Յովհ. Յովհաննիսեանը, որպէս նաւապետ, խաւարի մէջ տեսնում է փրկութեան մի դարաւոր փարոս, որ է Մայր Էջմիածինը. Մայր, որ մշտապէս իր շուրջն է հաւաքում տարագիր հօտը.

Սեւաթոյր երկնից մռայլ երեսին
Փայլել է նա միշտ, իբր յուսոյ մի շող -
Սիւն կենդանութեան, Մայր Էջմիածին,
Տարագիր հօտի արթուն ժողովող[23]:

---

20 **Յովհ. Յովհաննիսեան,** Հատընտիր, Երեւան, 1971, էջ 116:
21 **Յովհ. Յովհաննիսեան,** Երկեր, էջ 48:
22 Անդ, 55:
23 **Յովհ. Յովհաննիսեան,** Հատընտիր, էջ 139:

Ըստ Յովհ. Յովհաննիսեանի՝ միակ ճշմարիտ նաւահանգիստը Եկեղեցին է, որը եղել է «միշտ մեր պատմական կեանքի ալէծուփ ծովի գոռ փոթորիկների երեսից ազատ մնալու միակ նաւահանգիստը»[24]: Եկեղեցին նաեւ հայութեան փրկութեան «Նոյեան Տապանն» է, որտեղից «արձակել է Հայաստան աշխարհի այս ու այն խռովեալ ծայրերը աւետարեր աղաւնին՝ խաղաղութեան ձիթենին կտցին»[25]: «Մի ազգ, մի Եկեղեցի, մի բարձրագոյն ու գիտութեան տաճար. ահա՛ թէ ի՜նչ պիտի միշտ ունենանք աչքի առաջ, ահա՛ թէ ի՜նչ միշտ անջինջ կերպով դպաւորուած պիտի լինի մանաւանդ նոցա սրտում, որոնք վայելել են եւ վայելում են այդ նուիրական երեք սրբութեանց մայրական խնամքն ու հոգատարութիւնը»[26], - հայրենանուէր եւ եկեղեցասէր բանաստեղծի այս պատգամը հաստատագրուած է իւրաքանչիւր հայորդու:

«Սուրբ Էջմիածին» բանաստեղծութեան մէջ հեղինակը ներկայացնում է Եկեղեցու՝ ի դէմս Ս. Էջմիածնի յաւիտենականութիւնը, որը խաւարում վառուող կանթեղ է, ցրուած հօտը ժողովող անքոյթ փարախ եւ դարէդար փառաբանուող «շողակաթ լուսոյ խորան».

Փա՛ռք, ապաւեն մեր անմահ, Էջմիածի՛ն[27]...

Այսպիսով, բանաստեղծն իր կենդանի հաւատքն է արտայայտում Ազգի եւ Եկեղեցու հանդէպ. «Մի Հայաստանեայց ազգային Եկեղեցի, որի վրայ է մեր յոյսը, որից պիտի ծագէ դէպի փրկութիւն առաջնորդող լոյսը»[28]: Փրկութեան լոյսը, որպէս մի կանթեղ, քնարերգուն տեսել է Արագածի կատարին, որը ինչպէս Անդրանիկ Տէրտէրեանն է գրում, «ծաղկել է ձմռանը յաջորդող գարնան առաւօտներում»[29]: Այդ կանթեղը հասարակ եւ ձեռակերտ լուսարձակ չէ, այլ մեր առաջին Հայրապետ Գրիգոր Լուսաւորչի մշտավառ կանթեղն է, որ բանաստեղծի վկայակոչմամբ՝ «վառող Աջն է մեզ միշտ հովանի»[30]: Ինչպէս Յակոբ Օշականն է նշում. «Յատուկ անունները երբեմն շատ խորունկ զգացումներ կը խտացնեն իրենց մէջ: Երբ կը դիմանան դարերու, անոնք ուժի կը վերածուին: Այս կարգէն է Լուսաւորիչը որ ճիշտ տասնըհինգ դար կանգուն պահեց այս ժողովուրդին հոգին, երբ մեր միւս ուժերն ու փառքի զսպանակները լքեցին մեզ»[31]:

Հետաքրքիր է «Լուսաւորչի կանթեղը» բանաստեղծութեան շարժառիթը: Չնայած նրա ընկեր Գարեգին Լեւոնեանը չի յիշում օրը, բայց փաստագրական տեղեկութիւնները վկայում են, որ 1903 թ. մարտի 23-ին՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի տօնին Ճեմարանի տեսուչ Կարապետ Կոստանեանի նախաձեռնութեամբ կազմակերպուել էր մեծ միջոցառում՝ նուիրուած Մայր Տաճարի հիմնադրման 1600-ամեակին[32]: Հանդիսութեանը մասնակ-

24 **Յովհ. Յովհաննիսեան,** Ճառ Ճեմարանի..., էջ 629:

25 Անդ:

26 Անդ, էջ 629-630:

27 «Սուրբ Էջմիածինը հայ մատենագրութիւնում (V-XIX դարեր)», աշխ.՝ Յ. Քէօսէեանի եւ Վ. Դերիկեանի, Ս. Էջմիածին, 2003, էջ 433:

28 **Յովհ. Յովհաննիսեան,** Ճառ Ճեմարանի..., էջ 629:

29 **Անդրանիկ Տէրտէրեան,** Մշտապէս կենդանի ու հմայիչ Յովհաննէս Յովհաննիսեանը. «Էջմիածին», 2000, Զ., էջ 102:

30 **Յովհ. Յովհաննիսեան,** Հատընտիր, էջ 165:

31 **Յակոբ Օշական,** Հայ գրականութիւն, Երուսաղէմ, 1942, էջ 521:

32 Տե՛ս «Արարատ», 1903, Դ., էջ 329-330:

ցում էին Ճեմարանի ուսանողները եւ դասախօսական կազմը: Ուսուցչանոցում փակուած Յովի. Յովհաննիսեանը, պատռելով աշակերտներից մէկի տետրակի երեսը (քանի որ թուղթ չունէր), վայրկեանների ընթացքում գրեց մի բանաստեղծութիւն՝ «Լուսաւորչի կանթեղը» վերնագրով: Բանաստեղծութիւնը ընթերցելուց հետո Գարեգին Լեւոնեանը, զարմացած Յովհաննիսեանի մտքի ճկունութիւնից եւ հապճեպ գրուած բանաստեղծութեան վեհութիւնից, նրա ձեռքից վերցնում է թերթիկը եւ որպէս մասունք պահում. տարիներ անց իր «Յուշեր»-ում գրում է. «Մօտ քառասուն տարի է անցել այդ օրից, եւ ես դեռ պահում եմ այդ թանկագին յիշատակը՝ «Լուսաւորչի կանթեղի» նախնական օրինակը, մատիտով գրած, ջնջումներով եւ ուղղումներով»[33]: Հայտնի է, որ Յովի. Թումանեանը եւս ունի նոյնանուն բանաստեղծութիւն՝ գրուած 1902 թ.: Շարունակելով միտքը՝ Գ. Լեւոնեանը նկատում է. «Պուշկինի եւ Լերմոնտովի «Մարգարէ»-ները դնելով կողք-կողքի, դժուարանում ենք որոշել, թէ ո՞րն է նրանցից աւելի ուժեղ. հայ գրականութեան մէջ էլ համարձակօրէն այդպիսի մրցութեան կարող են դուրս գալ մեր երկու անուանի պոէտների «Լուսաւորչի կանթեղները»[34]:

Ճիշտ է՝ Գարեգին Լեւոնեանն անդրադարձել է երկու բանաստեղծի նոյնանուն ստեղծագործութիւններին, սակայն պէտք է ասել, որ Վահան Թէքէեանը եւս ունի «Լուսաւորչի կանթեղ» վերնագրով բանաստեղծութիւն՝ գրուած 1902-ին: Գրող եւ ուսուցիչ Յակոբ Օշականն իր «Հայ գրականութիւն» վերնագրով ուսումնական ձեռնարկում զգալի տեղ է յատկացրել «Լուսաւորչի կանթեղ» վերնագրով բանաստեղծութիւնների քննական, լեզուական եւ իմաստային քննութեանը: Եթէ Թումանեանն ու Յովհաննիսեանը գրում են շատ պարզ եւ ժողովրդին հասկանալի լեզուով, ապա Վ. Թէքէեանն աւելի շատ կենտրոնանում է բանաստեղծութեան խորհրդաբանութեան վրայ՝ չանտեսելով ոսկեղենիկ հայերէնն ու հանգաւորումները: Եթէ Յովի. Թումանեանի եւ Յովհ. Յովհաննիսեանի նոյնանուն ստեղծագործութիւնները խորհրդով պարզ են, մանկական, թելադրող, զեղուն, ինչպէս Յ. Օշականն է ասում. «...Կը դպի ու կ՚անկցնի: Որ չի տպաւորեր առաջին հպումով: Որ կը յառնէ ճիգով, ու համեմատական վայելք կը բաշխէ մեր յոգնութեան»[35], ապա Թէքէեանի համար «Լուսաւորչի կանթեղը - երկնքին վրայ փնտռտուք մը: Մարդկային իրականութեան վերադարձ մը: Ձեր ցեղին ճակատագիրը: Մահուան հրախաղութիւնը: Մեծ անծանօթը»[36]: Ինչեւէ, պէտք է նկատել, որ երեք բանաստեղծութիւնն էլ իրենց ուրոյն տեղն ունեն հայ գրականութեան մէջ, որովհետեւ դրանք իրենց գեղագիտական արժէքով, ուղղուածութեամբ եւ նպատակով տարբեր են:

Գարնան զարթօնքը, բնութեան արբունքը՝ սիրոյ եւ տառապանքի երգիչը կապում է մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի հրաշափառ Յարութեան խորհրդի հետ. Յարութիւն, որ տարածւում է ոչ միայն մարդկանց, այլ նաեւ բուսական, կենդանական աշխարհի վրայ: Խորհրդաւոր Զատիկը մարդկանց սրտերում դաջում է Քրիստոսի Ս. Յարութեան հաւատը, յոյսը եւ սէրը՝ իբրեւ յաւիտենականի երաշխիք.

33 **Գ. Լեւոնեան,** նշվ. աշխ., էջ 51-54:
34 Անդ, էջ 54-55:
35 **Յ. Օշական,** նշվ. աշխ., էջ 522:
36 Անդ:

Ջինջ երկնքից ոսկի արեւ
Տալիս է մեզ սիրոյ բարեւ -
Ուրախութիւն այսուհետեւ.
«Քրիստոս յարեա՛ւ ի մեռելոց»:

Խոխոջում է վճիտ առուակ,
Ջրում հովիտ, դաշտ, արտորայք,
Աւետելով նոր յոյս, նոր կեանք.
«Քրիստոս յարեա՛ւ ի մեռելոց»:

Եւ պարտէզում կանաչազարդ
Թռչնակները կայտառ, զուարթ
Ճռուողում են քաղցր երգով.
«Քրիստոս յարեա՛ւ ի մեռելոց»[37]:

Այս փրկչական խորհրդին հարազատ՝ բանաստեղծն ամէն օր, ականջը դէպի «Գիւղի ժամի» աւետարեր զանգակները՝ փառաբանում է Աստծուն.

Ժամը տուին - տա՛ն-դոյ, տա՛ն-դոյ,
Տէ՛ր, փառքդ շա՛տ, տա՛ն-դոյ, տա՛ն-դոյ[38]...

37 **Յովհ. Յովհաննիսեան,** Հատընտիր, էջ 16:
38 **Յովհ. Յովհաննիսեան,** Երկեր, էջ 43-44: